ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.01.2014թ.
212-ի 3

“Աշտարակ կաթ” ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
պարոն Աշոտ Ափոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ափոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե “Աշտարակ կաթ” ՓԲԸ-ի արտադրած կաթում և կաթնամթերքում ըստ ապրանքատեսակների, քա՞նի տոկոս են կազմում “անարատ կաթի”, “անարատ չոր կաթի”, “չոր յուղազերծ կաթի”, “կաթնային չոր շիճուկի”, “անարատ չոր սերուցքի” զանգվածային մասերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան